Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ելույթը մանկապատանեկան ասմունքի հանրապետական 8-րդ փառատոնի Լոռու մարզային եզրափակիչ փուլին՝ Դսեղում

26.10.2014թ.

Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետ պարոն Հովիկ Աբրահամյան,

հարգելի բարեկամներ, հյուրեր,

փառատոնի թանկագին մասնակիցներ:

Մանկապատանեկան ասմունքի հանրապետական փառատոնը, որն ի սկզբանե նախաձեռնվեց և անց է կացվում Հայաստանի Հանրապետության վարչապետ պարոն Հովիկ Աբրահամյանի բարձր հովանու ներքո, արդեն հարուստ կենսագրություն ունի: Հարուստ՝ ոչ միայն իր ութնամյա պատմությամբ, այլև հարյուր հազարավոր այն պատանիների ու աղջիկների մասնակցությամբ, ովքեր այս տարիների ընթացքում վարպետության դասեր առնելով ու մասնակցելով փառատոներին, հուզիչ և բովանդակալից հնչեցրեցին հայոց հնագույն և նորօրյա պոեզիայի գոհարները՝ վերահաստատելով ազգային ոգեղեն բարձր արժեքների ժառանգման և հարատևման մեծ խորհուրդը:

Այդ ոգեղեն շքահանդեսում անմասն չմնաց նաև Լոռին, այն բնաշխարհը, որը ներշնչանքի աղբյուր և ծննդավայրն է եղել Ամենայն հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի համար:

Լոռու պատանիներն ու աղջիկներն առանձնակի են պատրաստվել նաև այս՝ 8-րդ փառատոնին, քանզի այն նվիրված է մեր ազգային տաղերգության այն երկու տիտաններին, Հովհաննես Թումանյանին և Ավետիք Իսահակյանին, ովքեր մշտական ուղեկիցն են յուրաքանչյուր նոր սերնդի համար՝ թոթովախոս տարիքից մինչև զառամյալ ծերություն:

Հարգելի բարեկամներ, ողջունելով ձեզ, առիթն օգտագործելով ցանկանում եմ խորին շնորհակալություն հայտնել բոլոր այն մանկավարժներին, ովքեր մեր մատաղ սերնդին հայեցի բառ ու բան ուսուցանելով, միաժամանակ հոգ են տանում, որ իրենց սաները հայոց մեծերի տաղերի ոգին գեղարվեստորեն մատուցեն մեզ:

Ցանկանում եմ երախտագիտություն հայտնել փառատոնի հանձնախմբի բոլոր անդամներին, կազմակերպիչներին և, իհարկե, Ձեզ, մեծարգո պարոն Աբրահամյան, որ այսչափ կարևորում և սատարում եք մատաղ սերնդի հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակությունը:

Յուրաքանչյուր այսպիսի ազգաշահ մի գործ, որ հասցեագրված է մեր մատաղ սերնդին, մի-մի առողջ հունդ է գցված այն պարարտ հողին, որը մենք անվանում ենք **Հայրենիք:** Այդ հունդերով նոր ծաղկուն գարուններ ու բերքառատ աշուններ ենք ունենալու՝ դարձյալ ու կրկին վերահաստատելով Ամենայն հայոց բանաստեղծի մարգարեական պատգամը.

- Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՛կ նըրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար:

Շնորհակալություն: